

№1163

1928 №25

հիպոթեզ

ԻՆՉՈՎ ԿՈՒՋԵՅԻՐ

ՃԱՄԲՈՐԴԵԼ



ВНЕШНЯЯ
МИНИСТЕРСТВО
ВНЕШНИХ СВЯЗЕЙ
Английский язык
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1928


82 Կ
Կ-75

820
-75

Ca 1992

30 MAY 2011

Տեֆուս—Լ. Ս. Միսչելի
Թարգմանություն—Ա. Մ.-Յ.-ի



Լինում ե չի լինում մի մեծ, սպիտակ ու գեղեցիկ յեզ։
Մեջքը լայն, յեղջուրները յերկար, աչքերը խոշոր ու գեղեցիկ։
Մի ամառվա արևոտ որ նա ծանր քայլում եր ճանապարհով և
ահա թե ինչ եր մտածում։

— Յես շատ դոհ եմ ինձնով, մեծ եմ, չաղ և ուժեղ։ Մի՞թե
կգտնվի մեկը, վոր կարողանա այսպես ծանր բեռ բարձրացնի։
Մի՞թե բացի ինձնից կգտնվի մեկը, վոր կարողանա վարել այսպիսի
խորը ակոս։ Ի՞նչ կանեյին մարդիկ, յեթե յես չլինեյի։

Յեվ հենց այդ ըտպէյին նա լսեց, վոր մեկը վազում ե ճանա-
պարհով իր յեռակից — տոպ-տոպ-տոպ-տոպ, և հանկարծ յերևաց մի
մեծ սպիտակ ձի։

— Բարի որ — մռնչաց յեզը՝ իր խոշոր ու գեղեցիկ աչքերը
դանդաղորեն դարձնելով դեպի վազող ձին։ — Ինչի՞ յես եղպես շտա-
պում, բարեկամ։



Ձին թափահարեց իր բաշը
և խրխնջաց.

— Շտապում եմ, վո-
րովհետև յես ստեղծված եմ
նրա համար, վոր արագ վա-
զեմ: Չե՞ վոր յես կարող եմ
վազել 10 վերստ այնքան ժա-
մանակում, ինչքանում դու
կարող ես քարշ գալ միայն մեկ

վերստ: Մարդիկ այլևս կարիք չեն դրում այդպիսի սպիտակ ու մեծ
կրիայի, ինչպիսին դու յես: Ով շտապում ե, թող ինձ հեծնի: Նայի՛ր,
ինչպես արագ եմ յես վազում: Յե՛վ — տուպ-տուպ-տուպ — ձին առաջ
վազեց ճանապարհով:


Յերբ ձին անհետացավ, յեղը սկսեց մտածել այն բոլորի մա-
սին, ինչ վոր ասաց ձին:

— Նա ինձ անվանեց սպիտակ մեծ կրիա, նա ասաց վոր կա-
րող ե 10 վերստ վազել այնքան ժամանակում, ինչքան ժամանա-
կում յես կարող եմ քարշ գալ միայն մեկ վերստ: Իսկապես վոր
այդ արագավազ ձին արժանի յե ավելի մեծ զարմանքի քան յես:

Իսկ ձին վազում եր ճանապարհով և ահա թե ինչ եր մտածում:

— Յես գոհ եմ ինձնով: Յես թեթև եմ, արագ, արագ քան
յեղը: Ի՞նչ կանեյին մարդիկ, յեթե յես չլինեյի:

Հենց այդ միջոցին ձին լսեց ինչ մի տարրերինակ շվիոց վերեից:
Նա յետ նայեց: Այդ ձայնը գալիս եր յերկաթաթևերից, վորոնք
դողում եյին ու զրնգում:




Հետո ձին լսեց արագ պտտվող անիվների ձայնը—չք-չք-չք-չք...
Յեւ լինչ եք կարծում, ում ե նա տեսնում՝ յերբ յետ ե նայում:




Ճանապարհով սլանում
եր ելեքորաքարշը, վորը իր
գազաթով քսվում եր երկա-
թաթելին: Խեղճ ձին այնպես
վախեցավ, վոր քիչ եր մնում
աչքերը դուրս գային, իսկ
մազերը բիզ-բիզ կանգնեցին:

— Ի՞նչն ե շարժում այս մեքենային— զարմանում եր ձին:
— Եյ, անմիտ խրխնջան, չտես, — պոռաց ելեքորաքարշը, վորը
շարժվում եր ելեքորականությամբ:

— Յես չգիտեյի, չգիտեյի վոր աշխարհիս յերեսին դեռ գո-
յություն ունեն այս չորսվոտանի հնությունները: Բայց մարդիկ
այլևս ձեր կարիքը չեն զգում: Սյն ճանապարհը, վոր դու կարող






Ես անցնել կես ուրում, ես կարող եմ կարել մեկ ժամում, յեթե
դու տանում ես մեկ մարդ, յես կարող եմ հեշտությամբ տանել
տասը մարդ: Ով շտապում ե, յես նրան իսկույն տեղ կհասցնեմ:

Ապա մեկ նայիր ինձ: — Յե՛վ՛ նա արագ առաջ անցավ, թողնելով իր
յետևից միայն յերգող յերկաթաթելերը վերևում: Խեղճ ձին սկսեց
մտածել այն մասին, ինչ վոր ասաց ելեքորաքարչը:

— Նա ինձ անմիտ խրխնջան անվանեց, նա ասաց, վոր կարող ե անցնել մեկ ժամում այն ճանապարհը, վոր յես անցնում եմ կես ուրում միայն: Իսկապէս վոր նա ավելի մեծ զարմանքի յե արժանի քան ես:

Ելեքորաքարշը շորորվելով առաջ սլանալով, այսպես եր մտածում.


— Յես գոհ եմ ինձնով, իմ ուժը ստացված ե յերկնքում փայլող կայծակից: Յես արագ եմ քան յեզը, արագ քան ձին: Ի՞նչ կանեյին մարդիկ, յեթե յես չլինեյի:



Հանկարծ ելեքորաքարշը լսեց սարսափելի մի աղմուկ: Ասես մի հսկա հրեշ հաղալիս լինե՞ր՝ մնաս բարով ասելով կյանքին:

Չու-չու-չու, չու-չու-չու, չու-չու-չու, չու չու... Յեւ ապա ելեքորաքարշը տեսավ, վոր կանաչ դաշտի վրայով իրեն մոտենում ե սև ծխով ծածկված մի յերկաթե հսկա բան՝ կրակի բոցեր թողնելով իր քթածակերից:

— Բարեւ,—ծույլ-ծույլ սուլեց պարավողը, յերբ մոտեցավ ելեքորաքարշին:—Հը, ի՞նչ ե, ուժից ընկե՞լ ես հա՛, և դա զարմանալի չե՛: Դու չես կարող այնպես արագ շարժվել, ինչպես յես: Վորովհետեւ



ինձ առաջ է տանում գոլորշիի մեծ ուժը: Նայիր իմ անագին կաթ-
սաներին, նայիր իմ վառարանի ուժեղ կրակին: Այն ճանապարհը,
վոր դու անցնում ես կես ուրում — ես կանցնեմ մեկ ժամում: Յեթե
դու տանում ես մեկ մարդ, ինձ համար դժվար չե և հարյուր
մարդ տանել: Ով շտապում է, դեպի ինձ է վազում: Դե, մնաս
բարև: Շտապիր, շտապիր, դանդաղ ու ծույլ արարած:

Յեվ — չո՛ւ - չո՛ւ - չո՛ւ - չո՛ւ — գնացքը սլացավ, իր յետևից թող-
նելով միայն սև ծխի քուլաներ: Իսկ խեղճ ելեքտրաքարշը սկսեց
մտածել այն մասին, ինչ նրան ասաց պարավորը:

— Նա ինձ ծույլ անվանեց, նա ասաց, վոր մեկ ժամում
կանցնի այն ճանապարհը, վորը յես անցնում եմ կես ուրում: Ան-
կասկած, այդ անձոռնի պարավորը ինձնից ավելի ուժեղ է:

Իսկ գնացքը մոտեցավ կայարանին, վորը մոտ էր նավահան-
գրատին: Նա սպասում էր մինչև վազոնները ապրանք բեռնեն, և
այսպես էր մտածում: — Յես ինձնով գոհ եմ: Յես արագ եմ, արագ
և ուժեղ քան յեղը, քան ձին, քան ելեքտրաքարշը: Ի՞նչ կանեյին
մարդիկ, յեթե յես չլինեյի: Յես ամենքին ել ծառայում եմ և ամեն
կողմ ել անցնում եմ:

Այդ ժամանակ նա լսեց նավահանգստում կանգնած բեռնված
նավի ուժեղ ձայնը.

— Տո՛ւ - տո՛ւ - տո՛ւ, տո՛ւ - տո՛ւ - տո՛ւ...

Յեվ անա թե ինչ էր ասում այդ ձայնը.

— Այ դու ծիծաղելի յերկրային թամբալ, դու ասում ես
վոր կարող ես ամեն կողմ ել անցնել. միթե դու կարող ես
ջրի վրայով անցնել: Միայն յես եմ վոր կարող եմ ովկիանոսի
վրայով անցկացնել յերկրի բոլոր ապրանքները: Մինչև անգամ
այնտեղ, ուր դու կարողանում ես անցնել — այնտեղ քեզ ավելի


քիչ են հավատում քան ինձ: Մտածել ես դու արդյոք այն մասին,
թե ինչո՞ւ մարդիկ իրենց ապրանքները ավելի շատ փոխադրում են
նավով քան գնացքով: Հետո դու շատ ածուխ ես գործ ածում քո
արագության համար և շատ ես աղմկում:

Այնքան յերկար խոսեցին, վոր ծեր նավի ձայնը մինչև անգամ
խզվեց և նա ստիպված եղավ կոկորդը մաքրել բարձր «տու - տու»-ով,
ու անհետացավ խավարի մեջ:

— Իսկապես, նավը ճիշտ է ասում, — մտածեց գնացքը: —
Բայց այն ել է ճիշտ, վոր ցամաքի վրա յես ամենին ել ծառա-
յում եմ և ամեն տեղ ել կարող եմ անցնել:

Հանկարծ գնացքը լսեց մի անսպասելի ձայն: Ասես մեկը
քրքշալիս լիներ:

Գնացքը իրեն անհարմար զգաց: Նրան թվաց թե մեկը իր
վրա ծիծաղում է: Հպարտությամբ պտտեց իր լապտերը և լուսա-



վորեց մի ծիծաղելի փոքրիկ ավտոմոբիլ, վորն անվերջ դրդուում էր ու անվերջ քրքշալով առաջ սլանում — զ-զ-զ-զ-զ...

— Այ դու փոքրիկ նապաստակ, — դռուց գնացքը: Ինչի՞ յես պետք դու յերկրի վրա:

Ավտոմոբիլը ուժեղ շարժվեց, իր լապտերի ճառագայթներով ուժեղ փայլեց և սովորական ձայնով ասաց.

— Ինձ դարմացնում ե քո ծիծաղելի համոզմունքը, իբր թե դու կարող ես գետնի վրայով ամեն տեղ գնալ: Այ քեզ բան: Մի՞թե դու կարող ես քո գոլորշիով, կաթսաներով և վառարանով առանց քո ուելսների մի քայլ անել գետնի վրայով: Դու կապված ես քո յերկաթե ուելսների հետ և յեթե նրանք մի քիչ անկարգ են, դու իսկույն կգլորվես ցած: Միայն յես եմ վոր կարող եմ հաղթել բոլոր դժվարությունները: Իսկ դու անոգնական անդամալուծ ես, ուելսներին կպած: Ապա նայիր, թե ինչպես յես հիմա կբարձրանամ այս բլուրը. գոնկ-գոնկ-գոնկ-գոնկ...

Յեվ ավտոմոբիլը մի վայրկյանում բարձրացավ բլուրը:

Գնացքը դանդաղ կերպով պտտեց իր լապտերը և լուսավորեց փայլուն ուելսները. ու մտածում էր այն մասին, ինչ ասաց ավտոմոբիլը:

Նա ինձ անվանեց ուելսներին կպած: Բայց այդ փոքրիկ ու հիմար միջատը ինչպես է կարողանում վազել առանց ուելսների: Իսկապես վոր նա ավելի մեծ զարմանքի յե արժանի քան ես:

Այդ ժամանակ ավտոմոբիլը շատ առաջ էր սլացել անհարթ ճանապարհով և ինքնաբավական քրքշալով այսպես էր մտածում.

— Յես անչափ գոհ եմ ինձնով: Ինչպես թեթե յես բարձրացա այն բլուրը: Յես ամենից շատ եմ գովասանքի արժանի:

Այստեղ նա լսեց մի ձայն, վոր նրան սարսափեցրեց.

— Դզ-դզ-դզ-դզ-դզ...

Թվում էր թե այդ ձայնը լսվում է յերկնքից: Ավտոմոբիլը իր ուժերը լարեց, իր լապտերով լուսավորեց և հա թե ինչ տեսավ: Նրա գլխի վերև, ողի մեջ սավառնում էր մի մեծ աերոպլան: Նա մեկ բարձրանում էր, մեկ իջնում: Ուժեղ և արագ սլանում: Նրա հագին մարմինը քիչ-քիչ ցած էր իջնում: Հանկարծ նրա աղմկալի դզոցի միջից լսվեցին հետևյալ խոսքերը.

— Դզ-դզ-դզ-դզ-դզ... Դու կարծում ես թե դու արժանի յես զարմանքի, այ դու փոքրիկ, գետնի սողուն: Յես խղճում եմ բոլորիդ՝ յերբ յես ձեզ վրա յեմ նայում յերկնքից: Ճիշտ է, ձին ավելի ուժեղ է քան յեզը, ելեքտրաքարշը ավելի ուժեղ է և արագ՝ քան ձին, գնացքն ավելի ուժեղ է, արագ և հարմար, վորովհետև շատ մարդ և շատ ապրանք է տանում, նավը նրանով է լավ, վոր կարող է ջրի վրայով տեղափոխել և՛ մարդկանց, և՛ ապրանք, ավտոմոբիլը նրանով է լավ, վոր կարող է ամեն տեղով ել անցնել, գնացքի պես կպած չի ուելսներին, իսկ յես ամենիցդ ել լավ եմ և հարմար, կարող եմ թռչել ամեն տեղ—և՛ ցամաքի վրայով, և՛ ով-կիանոսի վրայով: Հետո յես ամենիցդ ել արագ եմ: Յեթե մեկը շտապում է, յես շուտ տեղ կհասցնեմ նրան:

Դզ-դզ-դզ-դզ-դզ...


Յեվ անագին աերոպլանը պտտեց իր անիվները, վեր բարձրացավ ինչպես թռչուն: Իսկ ավտոմոբիլը նայում էր ցածրից և խոսք չէր գտնում ասելու:

Բարձր, բարձր, բարձր թռավ աերոպլանը: Վեր, վեր ու վեր՝ մինչև վոր անհետացավ, աչքից ծածկվեց...

* * *

25500

25 400.



Д. Митчель
КТО БЫСТРЕЕ
 На армянск. яз.

Центральное Издательство Народов СССР
 Москва, Никольская, 10

ИНСТИТУТ
 ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ
 Академии Наук
 СССР